

ԼՂՀ –ում տարածված բուսական ծագում ունեցող հիմնական կերերի սննդաբարոքությունը Ս . Ա . Շ ա հ ն ա զ ա ր յ ա ն

Հոտեխիմիկական գիտությամբ և առաջավոր պրակտիկայով հաստատված է, որ բոլոր տնտեսական և անասնաբանական հատկանիշները կենդանիների մոտ չեն գտնվում սաղմում պատրաստ վիճակում, այլ ձևավորվում են կենդանու ամենատական զարգացման ընթացքում ժառանգականության և արտաքին միջավայրի պայմանների՝ առաջին հերթին կերակրման ու խնամքի ազդեցության տակ:

Կերակրում մեծ դեր է խաղում տոհմային սելեկցիան աշխատանքում, գոյություն ունեցող ցեղերի պահպանման, նրանց կատարելագործման և նոր ցեղերի ստեղծման գործում: Վատ կերակրման դեպքում ցեղային անասունը կազմալուծվում և կորցնում է իր մթերատու և ցեղական հատկությունները:

Սննդանյութերն օրգանիզմին անհրաժեշտ են որպես էներգիայի աղբյուր մարմնի ջերմաստիճանի պահպանման, աշխատանքի կատարման, որպես կառուցվածքային նյութ օրգանների և հյուսվածքների կազմավորման, մթերատվության ձևավորման, պտղի զարգացման ու օրգանիզմում պահեստային սննդանյութերի կուտակման համար:

Ինչպես լրիվությամբ բավարարի կերը այդ պահանջները, այնքան այն ավելի է սննդաբար օրգանիզմի համար: Կերերի սննդաբարության մասին կարելի է պատկերացում կազմել ընկելով նրանց քիմիական կազմից, հաշվի առնելով այն հիմնական պրոցեսները, որոնց հետևանքով կերերը վեր է ածվում անասնաբուծական մթերքների, նրանց մարսելիությունը կենդանիների կողմից և սննդանյութերի օգտագործումը:

Գյուղատնտեսական կենդանիների կերակրման համար հիմնականում օգտագործում են բուսական ծագում ունեցող կերեր:

Հաշվի առնելով առանձին բնակլիմայական գոտիների առանձնահատկությունները, ոլորնք վճարված ազդեցություն են ունենում կերերի սննդաբարության վրա, մենք մի շարք տարիների ընթացքում գիտատնտեսական փորձերի միջոցով, կրու կովերի վրա, ուսումնասիրել ենք Լեռնային Ղարաբաղում տարածված հիմնական կերերի՝ գարու, եգիպտացորենի, ալվուլոյի, կարմրանի, սուրճի կանաչ զանգվածի, շաքարային ճակնդեղի, եգիպտացորենի սիլոսի, սլաքի, եգիպտացորենի հատիկի սննդաբարությունը, նրանց ազդեցությունը մթերքի և հատկապես կաթի քանակի ու որակի վրա, որոնց արդյունքները կարող են հիմք հանդիսանալ կարգադատ տավարի լրարժեք կերաբաժնի կազմելուն:

Քանի որ, վերը նշված կերային կուտուրաների կանաչ զանգվածը, ըստ սննդաբարության կայտը է ծառայել որպես ինքնուրույն կերաբաժին, ապա նրանց հետ կապված գիտահետազոտական փորձերը տարվել են ավելի պարզ սխեմայով, բաղկացած երեք շրջաններից՝

Փորձի սխեման

Նախապատրաստ ական շրջան	Փորձական շրջանի սկիզբը	Հաշվառման շրջան
Անցում քաղղ կերաբաժնից միայն տվյալ կուտուրայով կերակրվում 6օր	Կերակրում միայն տվյալ կուտուրայի կանաչ զանգվածով, հաշվի առնելով ծախսված կերի և ստացված մթերքի քանակը Սեղոյությունը 6-7օր	Կերակրում միայն տվյալ կերի կանաչ զանգվածով, հաշվի առնելով ծախսված կերի և ստացված մթերքի քանակը մարտոդական վիճակի հետ Սեղոյությունը 7օր

Եգիպտացորենի սիլոսի, շաքարի ճակնդեղի և հատիկային կերերի սննդաբարության հետ կապված գիտական փորձերը տարվել են համեմատաբար բալո սխեմայով, առաջնորդվելով մասկին համամիտքեական անասնաբուծական գիտահետազոտական ինստիտուտի կողմից մշակված մեթոդիկայով՝

Փորձի սխեման

Նախապատրաստ ական շրջան	I հաշվառման շրջան	Անցման շրջան	II հաշվառման շրջան
10 օր	25 (17+8) օր	10 – օր	25 (17+8) օր
Անցում հիմնական կերաբաժնի	Կերակրում հիմնական կերաբաժնի վ	անցում 70-80% հիմնական կերաբաժնի + 30-20% ուսումնասիր վող կերի	Կերակրում ըստ սննդաբարության 70-80% հիմնական կերաբաժնի + 30-20% ուսումնասիրվող կերի

Գիտահետազոտական փորձերը անց են կացվել կովկասյան գորշ ցեղի ութ գլուխ կովերի վրա, միջին սնվածության, 5 – 7 տարեկան հասակի, լսկատացիայի 3 – 4 ամսվա, 350-400 կգ կենդանի զանգվածով, 10 –12 կգ. օրվա միջին կաթնատվությամբ:

Հիմնական կերաբաժինը փորձի առաջին շրջանում բաղկացած է եղել մարգագետնային խոտից, եգիպտացորենի սիլոսից, շաքարի ճակնդեղից համաձեւված կերից, կերակրելի աղից և ուսումնասիրվող կերից:

Ամբողջ փորձական շրջանում վերցվել են կերերի ճնուշները անալիզի համար, ամենատեղանքին հաշվարկվել են ընդունված կերի քանակը և նրանց մնացորդները, ստացված կաթի քանակը և որակը: Կենդանիների կշռումը կատարվել է փորձնական շրջանի սկզբում և վերջում: Հաշվառման շրջանը տևել է 8 օր, որի ընթացքում տարվել են մարսողության փորձ, ագուտային և համբային նյութերի փոխանակման պրոցեսները:

ուսումնասիրությամբ:

Վերցված կերերի մնույններում որոշվել է ջրի, սպիտակուցի, ճարպի, քաղամբանյութի, անագոտ էքստրակտային նյութերի և մոխրի պարունակությամբ:

Կաթի յուղայնությունը որոշվել է նախապատրաստական և ամցումային շրջանների սկզբում երկու անգամ, հաշվառման շրջաններում երկու օրը մեկ: Կաթում որոշվել է յուղի, սպիտակուցի, կաթնաշաքարի, ֆոսֆորի պարունակությունը, ռուսումնասիրվել կաթի բթվությունը և խտությունը: Միաժամանակ կատարվել է աղյան կենսաքիմիական անալիզ, մրանում որոշել հեմոգլոբինի, ռեզերվային էինմալյուրյան և կալոսիին պարունակությունը:

Կերակուլությունների քիմիական կազմի հետազոտությունների արդյունքները արտացոլված են թիվ 1 աղյուսակում

Կերի քիմիական կազմը (տոկոսներով)

Կերի տեսակը	խոր	ժրոտ էին	թաղ ան- թանյ ուր	ճար պ	ԱՆՆ	մո- խիթ
Գարու կանաչ զանգված	72,35	2,15	8,35	0,75	14,63	1,77
Առվույտի կանաչ զանգված	77,08	4,05	7,34	1,20	7,54	2,79
Նզիպատագործի մի կանաչ զանգված	83,96	1,00	4,31	1,00	8,74	0,99
Կորնզանի կանաչ զանգված	77,83	3,40	6,00	0,41	9,57	1,79
Շաքարի ճակնդեղ	77,89	1,12	1,56	0,14	18,35	0,94
Նզիպատագործի մի հատիկ	19,88	10,37	2,39	4,13	62,00	2,03
Ոլորի հատիկ	15,09	21,44	5,60	1,11	54,46	2,30

Հաշվի առնելով, որ վերջին ժամանակներս մի շարք երկրներում, այդ թվում և Ռուսաստանում, մշակվել է կերերի և կերաբաժինների սննդաբարդության զննահատման էներգետիկական սխեման, հիմք ընդունելով փոխանակման էներգիան, մեր հետազոտություններում նշված կերերի զննահատմանը կատարելով վարսակային կերամիավորով, միաժամանակ վերահաշվարկման մեթոդով որոշվել է նրանց էներգետիկական սննդաբարդությունը:

Այս մեթոդով զննահատման դեպքում որոշում են փոխանակման էներգիայի չափը, որը իրենից ներկայացնում է կերի կամ կերաբաժնի մի մասը: Վերջինս օրգանիզմի կողմից օգտագործվում է կենսոսնակության պահպանման և մեղրի ձևավորման համար: Փոխանակման էներգիայի պարունակությունը կերերում որոշվել է նրանցում պարունակվող բովանդակ էներգիայի և արտաբորանքով արտազատված էներգիայի տարբերությամբ, հիմք ընդունելով կերերի քիմիական անալիզի ու մարսելի սննդանյութերի տվյալները: Որպես էներգետիկական կերամիավոր

ընդունված է 2500 կկալորիան: Կերերի սննդաբարդության զննահատման ուսումնասիրությունների արդյունքները բերված են թիվ 2 աղյուսակում:

Աղյուսակ 2

Կերի սննդաբարդությունը (մեկ կգ-ի հաշվով)

Կերի տեսակը	Շարսակային կերա- միավոր (կգ)	էներգիայի պարունակու- թյունը (կկալ)	էներգետի կազմի կերամիա- մուր
Գարու կանաչ զանգված	0, 15	7710	3, 03
Առվույտի կանաչ զանգված	0, 19	6244	2, 50
Նզիպատագործների կանաչ զանգված	0, 16	3909	1, 65
Մորդուի կանաչ զանգված	0, 16	3399	1, 40
Կորնզանի կանաչ զանգված	0, 20	4642	1, 85
Շաքարի ճակնդեղ	0, 25	6355	2, 54
Նզիպատագործների սնուր	0, 20	3994	1, 31
Նզիպատագործների հատիկ	1, 22	23810	9, 05
Ոլորի հատիկ	1, 16	15185	6, 07

Երաշխավորվում է կաթնային տավարաբուծության բնագավառում աշխատող գոտանասնաբու ժակն մասնագետների, գիտական հետազոտությունների նշված արդյունքները օգտագործել կովերի ռացիոնալ կերակրման կազմակերպման և լիարժեք կերաբաժնի կազման տեսանկյունով:

Шахназарья С. А.

Резюме

На статью Шахназарья С.А. по теме „Питательная ценность основных кормов растительного происхождения распространенные в НКР“.

В научно –хозяйственных опытах на дойных коровах изучена питательная ценность зеленой массы ячменя, кукурузы, моцеры, эспарцета, сорго, а также кукурузного зерна, сахарной свеклы, гороха, кукурузного силоса и ее влияние на качество и количество полученного молока.

Результаты проведенных исследований могут стать основой для составления полноценного рациона молочного скота в условиях НКР.